

Մ աշտոցի Ա րձագանգ

Հայաստանեայց Եկեղեցւոյ Սուրբ Յակոբ Կիրակնօրեայ Դպրոցի ամսաթերթ
WWW.SOURPHAGOP.ORG (26-րդ տարի)

Այս թիւով.....

Դեկտեմբեր ամսուան բացատրական
տօնացոյց Էջ 2-8

Դաւիթ՝ թագաւոր, մարգարէ, թե
սաղմոսագիր

Տօն՝ Սուրբ Առաքեալներու
Թաղէնսի եւ Բարթողիմէոսի

Հ ա յ ա ս տ ա ն ի առաջին
լուսաւորիչները

Ս. Պետրոս եւ Ս. Պօղոս

Ս. Ստեփանոս Նախավկայ

Որոտման Որդիք

Ս. Արգար Ա. թագաւոր

Դամասկոսի Ճամբան

Սաղմոսավանքը

Ս. Յակոբ Մծբնայ Հայրապետ

Յովհաննէս Մկրտիչ Էջ 9

Անսակարկ սէր եւ ներողամտութիւն
Էջ 10

Բացատրութիւն՝ Հայց. Առաք. Սուրբ
Եկեղեցւոյ Պատարագին Էջ 11-13

Որն է ճիշդ պատասխանը Էջ 14-17

Տօնածառի զարդ Էջ 18

Լուրեր Կիրակնօրեայէն Էջ 19-20

Դեկտեմբեր 2025 (ԼԳ տարի թիւ 4)



Յ... Յիսուս, Ս. Յակոբ

Խաչքարի Հեղինակ Ժողովրդական Վարպետ,
Ռուբեն Նալբանդյան

Ամսուան Համարները

«Հետեւաբար, գացէք եւ բոլոր ժողովուրդները ինծի աշակերտ դարձուցէք: Զանոնք
մկրտեցէք՝ Հօր, Որդիին եւ Սուրբ Հոգիին անունով: Անոնց սորվեցուցէք այն բոլոր
պատուիրանները որ ես ձեզի տուի. եւ ահա միշտ ձեզի հետ պիտի ըլլամ, մինչեւ
աշխարհիս վախճանը»: Մատթէոս 28.19-20

Դեկտեմբեր ամսուան բացատրական տօնացոյց

Շբթ. 6	Սրբոյն Նիկողայոսի Սքանչելագործ Հայրապետին
Կիր. 7	Բարեկենդան Սբ. Յակոբի Պահքի
Գշ. 9	Տօն յղացման Ս. Կուսին Մարիամու յԱննայէ
Շբթ. 13	Սբ. Յակոբ Մծբնայ հայրապետ եւ Մարուգէ ճգնաւոր
Շբթ. 20	Սբ. Աբգար նախավկայ եւ անդրանիկ հաւատացեալ թագաւորին մերոյ
Գշ. 23	Սբ. Դաւիթ մարգարէ եւ Ս. Յակոբ Տեառնեղբայր Առաքեալ
Եշ. 25	Սբ. Ստեփանոս Նախասարկաւագ եւ առաջին մարտիրոս
Շբթ. 27	Սբ. Առաքեալներ Պետրոս եւ Պօղոս
Բշ. 29	Սուրբեր Որոտման Որդիներ Յակոբոս եւ Յովհաննէս Առաքեալներ,
Բշ. 29	Բարեկենդան Ս. Ծննդեան Պահոց

Պահքի Օրեր՝ 3, 5, 9-12, 17, 19, 24, 26, 30-31

Դաւիթ. թագաւոր, մարգարէ՝ թէ սաղմոսագիր

Մեզմէ քիչեր կան որոնք չեն լսած «Սաղմոս» բառը եւ չեն գիտեր անոր ինչ ըլլալը։ Սաղմոսները օրհներգներ, աղօթքներ եւ զանազան այլ կերպի քերթուածներ են, որոնք կ'արտայայտեն Աստուծոյ հանդէպ խոր հաւատք եւ սէր։ Հին կտակարանի գիրքերէն



Սաղմոսներու գիրքը կը համախմբէ 150 սաղմոսներ, որոնցմէ 73-ը աւանդաբար վերագրուած են Իսրայէլի Դաւիթ թագաւորին։

Այս տարի Դեկտեմբեր ամսուան 23-րդ օրը, Հայաստանեայց եկեղեցին կը յիշատակէ անունը սաղմոսագիր Դաւիթ թագաւորին որ նաեւ ընդունուած է իբր մարգարէ։

ՈՎ Է ԴԱՎԻԹ

Դաւիթ Իսրայէլի երկրորդ եւ մեծագոյն թագաւորն էր։ Ան զաւակն էր Յեսսէի, ծնած Բեթլեհէմ Բ. Ա. 1040 թուականին։ Իր ընտանիքի կրտսերագոյն որդին էր եւ ուներ 7 մեծ եղբայրներ։ Ան պատանեկութենէն Սամուէլ մարգարէի ձեռքով օծուած էր եւ հռչակ ստացած էր սպաննելով Գողիաթը։ Ան Բ.Ա. 1010 - 970 թագաւորեց, յաջորդելով Սաուլ թագաւորին։ Իր գործած մեղքին պատճառաւ Աստուած թոյլ չտուաւ Դաւիթին որ Տաճարը կառուցէ։

Դաւիթի Որդի

Յատուկ տիտղոս մըն է, որ Հրեաները կու տային գալիք Մեսիային։ Աւետարաններուն մէջ,

մեսիական այս տիտղոսը Յիսուսի տրուած է (Մտ. 1.1, Մր. 10.47)։

Դաւիթի Քաղաք

Նոր Կտակարանին մէջ այս անուանումը գործածուած է Դաւիթի ծննդավայրին՝ Բեթլեհէմի համար, ուր Յիսուս ծնաւ (ՂԿ 2.4 եւ 11)։

Սուրբ Նիկողայոս Զմիւռնացի՝ սքանչելագործ հայրապետը

Ս. Նիկողայոս Հայրապետը ծնած է Փոքր Ասիոյ Լիկիա գաւառի Բաթարա քաղաքին մէջ (ներկայիս Անթալիայի մօտակայ)։ Փոքր հասակէն կորսնցուցած է մեծահարուստ եւ բարեպաշտ ծնողքը եւ մեծցած է իր մօրեղբոր՝ Նիկողայոս Երեց եպիսկոպոսի խնամքին ներքեւ։ Աւետարանական պատգամը՝ «Ինչ որ ունիս՝ ծախէ եւ աղքատներուն տուր» (հմմտ. Մտթ. 19.21), իր կեանքի նշանաբանը կը դարձնէ՝ իր խնամքը տարածելով աղքատներու, հիւանդներու, բանտարկեալներու եւ որբերու վրայ։ Ժողովուրդի կամքով կը դառնայ Զմիւռնիոյ եպիսկոպոսը։ Հալածանքներու ընթացքին կ'աքսորուի, սակայն չի դադրիր ամենուրեք Աւետարանը քարոզելէ։ Խաղաղութիւն վերահաստատուելուն պէս կը վերադառնայ իր աթոռը, կը մասնակցի 325 թ. Նիկիոյ Տիեզերական ժողովին։ Կը մահանայ 326թ.։ Ընդհանրական Եկեղեցւոյ ամենասիրուած սուրբերէն է՝ առաւելաբար յայտնի Santa Claus անունով։



Յիսուսի Մկրտութիւնը

Ղուկաս 3:21-22

Կէտ ունեցող բաժինը ներկեցէք եւ գտէք թէ ինչ իջաւ Յիսուսի վրայ: Ապա գտէք պահուած բառերը եւ գրեցէք գծիկներուն վրայ:

Ներկայ ամբողջ ժողովուրդը մկրտուելէ ետք՝ Յիսուս ալ մկրտուեցաւ: Երբ Յիսուս կ'աղօթէր, երկինքը բացուեցաւ եւ _____ տեսանելի կերպարանքով _____ պէս իջաւ անոր վրայ: _____ մը լսուեցաւ երկինքէն, որ կ'ըսէր - « _____ », _____ »:



Սուրբ Պետրոս եւ Սուրբ Պօղոս առաքեալներ

Հայաստանեայց եկեղեցին, ամէն տարի Դեկտեմբեր ամսուան վերջին շաբթուան ընթացքին կը յիշատակէ Ս. Պետրոս եւ Ս. Պօղոս առաքեալները: Այս երկու անուններն ալ ընդհանրացած են մեր ժողովուրդին քով:

Ս. Պետրոս առաքեալ

Բուն անունով Սիմոն, ան Յիսուսի կողմէ Պետրոս անուանուեցաւ: Պետրոս կը նշանակէ վեմ, ժայռ եւ Յիսուս յայտարարեց. «Քեզի կ'ըսեն՝ թէ ժայռ ես դուն, եւ այդ ժայռին վրայ պիտի շինեմ իմ եկեղեցիս...» (Մատթ. 16.18):

Պետրոս այն առաքեալն էր որ երեք անգամ ուրացաւ Յիսուսը աւագ Հինգշաբթի օրը:

Ս. Պետրոս առաքեալ գրած է երկու ընդհանրական նամակներ որոնք մաս կը կազմեն Նոր Կտակարանին: Առաջին նամակը ուղղուած է «Աստուծոյ ընտրեալներուն», այսինքն՝ քրիստոնէաներուն: Անոր գլխաւոր նպատակն է քաջալերել ընթերցողները, որոնք իրենց քրիստոնէական հաւատքին համար հալածանքներու եւ նեղութիւններու դիմաց կը գտնուէին: Երկրորդ նամակը ուղղուած է առաջին դարու քրիստոնէաներու լայն շրջանակի մը՝ նպատակ ունենալով պայքարիլ սուտ ուսուցանողներու տարած աշխատանքին դէմ: Մոլորեցնող ուսուցումներէ եւ անպարկեշտ կենցաղէ հեռու պահելու համար քրիստոնէաները, առաքեալը կոչ կ'ուղղէ անոնց որ կառչած մնան Աստուծոյ եւ Յիսուս Քրիստոսի:

Ս. Պօղոս առաքեալ

Պօղոս առաքեալ, Յիսուսի 12 առաքեալներէն մէկը չէր: Բուն անունով Սօդոս կամ Սաւուդ, հրեայ բարեկեցիկ ընտանիքի մը զաւակն էր եւ դաստիարակուած էր ըլլալու կարծր եւ օրինապահ հրեայ մը, որ պայքարեցաւ քրիստոնէութեան տարածման դէմ: Չորս աւետարաններուն մէջ ռեւէ ակնարկութիւն չկայ Պօղոսի մասին: Կ'արժէ յիշել թէ Աստուածաշունչին մէջ Սօդոսի մասին առաջին ակնարկութիւնը կը տեսնենք Առաքեալներու Գործերը 7.58-ին մէջ եւ կը կարդանք նաեւ թէ «Ստեփանոսի քարկոծումը պահանջողներէն մէկն ալ Սօդոսն էր» (Առաքեալներուն Գործերը 8.1):

Սօդոս, որ աշակերտած էր Գամաղիէլի, եւ ունէր Հռոմէական քաղաքացիութիւն, շարունակեց Յիսուսի հետեւորդները հալածել եւ Աւագ քահանայէն (Երուսաղէմ) Դամասկոսի հրեայ ղեկավարներուն ուղղուած նամակներ առնելով ճամբայ ինկաւ դէպի Դամասկոս: Սակայն Դամասկոսի մօտերը լոյս մը փայլեցաւ, որ կուրցուց զինք, եւ լսեց ձայն մը որ կ'ըսէր. «Սաւուդ, ինչո՞ւ զիս կը հալածես»:

«Ո՞վ ես Տէր,» հարցուց Սաւուդ:

Ձայնը պատասխանեց. «Ես Յիսուսն եմ զոր դուն կը հալածես...»:

Առաքեալներու Գործերը զիրքին 9-րդ գլխուն մէջ կը կարդանք Սօդոսի դարձին մասին ու 18-րդ համարը կ'ըսէ «Անմիջապէս Սօդոսի աչքերէն կարծես կեղեւանքներ ինկան, եւ սկսաւ տեսնել: Ելաւ մկրտուեցաւ, եւ ապա կերակուր ուտելով զօրացաւ»:

Այս պատահարէն ետք Սօդոս Պօղոս կոչուեցաւ եւ նոյն ջանքով որ կը պայքարէր քրիստոնէութեան դէմ, աշխատեցաւ քրիստոնէութեան տարածման համար, եւ կոչուեցաւ 13-րդ եւ հեթանոսներու առաքեալ: Ան ունեցաւ 3 ճամբորդութիւններ եւ գրեց 14 նամակներ որոնցմէ տասը ուղղեց եկեղեցիներու եւ չորսը անհատներու:



Ս. Ստեփանոս նախավկայ, անդրանիկ վկան է որ իր արինը թափեց Յիսուս Քրիստոսը Աստուծոյ Որդին վկայելով: Յիսուսի 72 աշակերտներէն մէկը որ ուրիշ 6 հոգիներու հետ նախնական եկեղեցին (Պետրոս առաքելի առաջնորդութեամբ) կարգեց եկեղեցւոյ սեղանի սպասաւոր, այսինքն՝ սարկաւագ: Նոր Կտակարանի «Առաքեալներու Գործերը» գրքին 6-րդ գլխուն մէջ կը կարդանք 7 սարկաւագներուն նշանակուելու եւ Ստեփանոսի ձերբակալութեան պատմութիւնը, իսկ 7-րդ գլխուն մէջ կը կարդանք իր վկայութիւնը եւ քարկոծումին մանրամասնութիւնները: Ստեփանոսի քարկոծումը պահանջողներէն մէկն ալ Սոդոսն էր որ հետագային եղաւ Պողոս Առաքեալ: Մեր եկեղեցին այս սուրբին օրը կը նշէ Դեկտեմբեր 25-ին, կամ 26-ին եթէ 25-ը Կիրակի կամ պահքի օր ըլլայ:

Որոտման Որդիք

Մարկոսի Աւետարանին 3.16-19 ին մէջ կը գտնենք Յիսուսի 12 առաքեալներուն ցանկը՝ Պետրոս, Ջեբեդէոսի որդիները՝ Յակոբոսն ու եղբայրը Յովհաննէսը, որոնք «Բռաներգես», այսինքն Որոտացող Մարդիկ կոչեց, Անդրէասը, Փիլիպպոսը, Բարթողիմէոսը, մաքսաւոր Մատթէոսը, Թովմասը, Ալփիէոսի որդին Յակոբոսը, Թադէոսը, Նախանձայոյց Սիմոնը, եւ Իսկարովտիացի Յուդան որ զինք մատնեց:

Յովհաննէս Աւետարանիչ ձկնորս էր: Մինչեւ Յիսուսի հետեւիլը, կը հետեւէր Յովհաննէս Մկրտիչին: Ան Յիսուսի ամենասիրելի առաքեալն էր եւ հետեւեցաւ իրեն մինչեւ Գողգոթա: Խաչին վրայէն Յիսուս իրեն յանձնեց իր մօր հոգատարութիւնը: Իր եղբօր Յակոբոսի եւ Պետրոսի հետ ան դարձաւ Երուսաղէմի եկեղեցւոյ սիւներէն մէկը: Հետագային, իր գործունէութեան վայրը հանդիսացաւ Եփեսոսի եկեղեցին: Տիրոջ կամքով, Յովհաննէս Առաքեալ միւս առաքեալներէն աւելի ապրեցաւ եւ վախճանեցաւ 94 տարեկանին: Երբ արդէն շատ ծեր էր, իր քարոզներու ընթացքին շարունակ կը կրկնէր. «Ձաւակնէ րս, սիրեցէ ք զիրար»: Երբ իրեն կը հարցնէին թէ ինչո՞ւ յաճախ այդ բառերը կ'ըսէր. «Այս Յիսուսի պատուիրանն է, եթէ սեր ունենաք, ուրիշ ոեւէ բանի պէտք չէք ունենար»: Ան գրած է Աւետարան մը, երեք ընդհանրական նամակներ, եւ՝ յայտնութեան գիրքը:

Յակոբոսն ալ ձկնորս էր: Յակոբոսը շատ եռանդուն էր, գործունէայ, մեծ սէր եւ նախանձախնդրութիւն ունէր Յիսուսի հանդէպ եւ դարձաւ Հրեաներու ատելութեան զոհը: Ան գլխատուեցաւ Հերովդէս թագաւորի կողմէ 44 թուին, ըլլալով առաջին նահատակը առաքեալներու մէջ: Այս երկուքը հաւանաբար Քրիստոսի հանդէպ իրենց բոցավառ սիրոյ եւ նախանձախնդրութեան պատճառով կոչուեցան Որոտման Որդիք:

Ս. Աբգար Ա. թագաւոր, ըստ աւանդութեան՝ Ա. դարու անդրանիկ քրիստոնէայ թագաւորը, պարթեւ Արշակունի Արշամի որդին էր: Իր թագաւորութեան մայրաքաղաքը Եդեսիան էր: Ըստ Մովսէս Խորենացիի, ան հայոց թագաւորն էր: Մովսէս Խորենացին նաեւ կը գրէ թէ Աբգար թագաւոր լսած է Յիսուսի հրաշքներուն մասին եւ հաւատացած է որ Յիսուս ճշմարիտ Աստուծոյ որդին է, եւ նամակ ուղարկած է Յիսուսի որ գայ եւ զինք բժշկէ բոլորտուրէնէ: Յիսուս կը խոստանայ որկել իր աշակերտներէն մէկը որ բժշկէ զինք եւ կեանք շնորհէ իրեն եւ իր հետ եղողներուն: Յիսուսի համբարձումէն ետք, Ս. Թադէոս Առաքեալ կ'ուղղուի դէպի Եդեսիա եւ կը բժշկէ Աբգար թագաւորը եւ իր հետ եղողները:

Ասկէ ետք Ս. Թադէոս Առաքեալ կ'ուղղուի Աբգար թագաւորի զարմիկ Սանատրուկ թագաւորի պալատը: Մեր եկեղեցին Ս. Աբգար թագաւորի օտնը կը յիշատակէ ընդհանրապէս Յիսնակի Ե. Կիրակիին նախորդող Շաբաթ օրը:

Դամասկոսի Ճամբան

Յիսուսի համբարձումեն ետք, Իր հետևորդներուն եւ առաքելներուն դէմ փարիսեցիներու կողմէ տարուած հալածանքներ կատարողներէն ամենէն խիստ անձնատրուրիւններէն մէկն էր Սողոս անունով հրեայ վրանագործ մը որ ուներ հռոմէական քաղաքացիութիւն: Սողոս քահանայապետին քով երթալով, անկէ խնդրեց որ Դամասկոսի ժողովարաններուն ուղղուած նամակներ տայ, որպէսզի հոն երթալով եթէ Յիսուսի հետևորդներ գտնէ, ձերբակալէ եւ Երուսաղէմ բերէ:

Դամասկոսի ճամբուն վրայ, Սողոս որ յետագային Պողոս կոչուեցաւ, արժանացաւ Աստուծոյ անմիջական յայտնութեան: Ճառագայթող զօրաւոր լոյսի մը ընդմէջէն Յիսուս անոր երեւցաւ եւ պատուիրեց որ դադրեցնէ իր հալածանքները ու դառնայ Նոր Կտակարանի Քարոզիչ: Պողոս առաքել բազմաթիւ հրաշքներ գործած է եւ հիմնած եկեղեցիներ իր կատարած երեք ճամբորդութիւններուն ընթացքին:

Շնորհիւ իր բազմաթիւ բանաւոր քարոզներուն, գրած նամակներուն եւ առաքելական ճամբորդութիւններուն, տեսիլքներուն եւ յայտնութիւններուն ան կը նկատուի «հեթանոսներուն առաքել»ը:



Bartolome Esteban Murillo (1618-1682), *Le chemin de Damas*, Musee du Prado, Madrid



Սաղմոսավանքը կը գտնուի Հայաստանի Արագածոտնի մարզի սահմաններէն ներս: Սաղմոսաւան գիւղէն ներս կառուցուած այս վանքը եղած է միջնադարեան Հայաստանի հոգեւոր կեդրոններէն մէկը: Շինուած է տուֆէ եւ անոր ամենահին յուշարձանն է Սուրբ Սիոն եկեղեցին, կառուցուած Վաչէ Վաչուտեան իշխանի հրամանով 1215 թուականին: Համալիրին մաս կը կազմէ նաեւ Սուրբ Աստուածածին եկեղեցին:



Ս. ՅԱԿՈԲ

Ս. Յակոբ Մծբնայ Հայրապետ

Ե՞րբ կը տօնենք

Սուրբին յիշատակի օրը կանուխէն հաստատուած է Հայ Առաքելական եկեղեցւոյ տօնացոյցին մէջ եւ կը տօնուի ամէն տարի Յիսնակի երրորդ Կիրակի օրուան յաջորդող շաբաթ օրը: Այս կը նշանակէ թէ Սուրբ Յակոբի տօնը կը յիշատակենք Դեկտեմբեր 12-18 օրերուն մէջ հանդիպող Շաբաթ օրը:

Սուրբ Յակոբի կեանքը

Սուրբ Յակոբ ծնունդով ասորի էր, Ս. Գրիգոր Լուսաւորիչի հօրաքրոջ որդին եւ Պարթեւական տոհմէ: Անոնք միասին

դաստիարակուած էին Կեսարիոյ մէջ: Ս. Յակոբ որոշ ժամանակ ապրած էր Պարսկաստանի արքունիքին մէջ, սակայն հետագային կ'ընտրէ ճգնաւորի կեանքը եւ Ս. Հոգիին ներգործութեամբ կ'ուղղուի Մծբին քաղաքի վանքերէն մէկը՝ Մարուգէ ճգնաւորին մօտ: Երբ ան լեռներէն իջաւ մարդոց մօտ, տեղեկացաւ թէ Մծբինի շրջակայքի բնակիչները թէւէ դարձի եկած են, սակայն ծաղրանքով կը վերաբերին համաշխարհային ջրհեղեղին եւ Նոյեան տապանի պատմութեանը: Հետեւաբար սուրբը ճամբայ ինկաւ դէպի արարատ լեռը: Ան կ'ուզէր գտնել տապանէն կտոր մը եւ բերել ժողովուրդին անոնց անհաւատութիւնը փարատելու համար: Բայց լեռան գագաթը չհասած՝ հրաշք կատարուեցաւ. երբ Սուրբ Յակոբը քնացած էր, տապանէն խաչացել կտոր մը յայտնուեցաւ անոր գլխուն տակ...:

Ան մասնակցած է Նիկիոյ մէջ կայացած տիեզերական ժողովին 325 թուականին: Մծբինի աթոռին համար ձեռնադրուած է եպիսկոպոս: Այս մասին մարգարեացած էր Մարուգէ ճգնաւոր: Հայ մատենագրութեան մէջ յայտնի են իր 22 ճառերէ բաղկացած «Զգօն» գիրքը: Ս. Գրիգոր Նարեկացին հիացող մը եղած է Յակոբ Մծբնայ Հայրապետին, որուն նուիրած է իր ներբողական գրութիւններէն մէկը:

Սուրբ Յակոբին նուիրուած «Յաղթող եւ Սուրբ Հայրապետ» անունով գեղեցիկ շարական մը գրուած է: Այս շարականը հաւանաբար գրուած է այն դէպքին առիթով ուր կը պատմուի թէ պարսից Շապուհ Բ. թագաւորը աշխարհաճաւալ իր արշաւանքներուն ընթացքին կը հասնի Մծբին ու գայն կը պաշարէ 70 օրեր շարունակ: Շնորհիւ Ս. Յակոբի քաղաքին ներսէն կազմակերպած միջոցառումներուն, ան անկարող կ'ըլլայ գրաւելու Մծբինը: Ս. Ներսէս Շնորհալին այդ յաղթանակին կը ձօնէ վերոյիշեալ շարականը:



Ճաճանչ Ս. Յակոբի Մասունքին
Սուրբ Յակոբ Առաջնորդանիստ Մայր
եկեղեցւոյ Ս. Խորանին վրայ:

Յովհաննէս Մկրտիչ

Ղուկաս 1-3



1-



2-



3-



4-



5-

Ճիշդ կարգով նկարներուն տակ ընդօրինակէ՝

1 - Դուն ես իմ սիրելի Որդիս. Քեզի հաճեցայ: Ղուկաս 3:22

2 - Զաքարիա, մի վախնար, Աստուած լսեց աղօթքդ: Ղուկաս 1:13

3 - Յովհաննէս պիտի կոչուի: Ղուկաս 1:60

4 - Ասկէ ետք գործով ցոյց տուէք թէ ապաշխարած էք: Ղուկաս 3:8

5 - Եւ դուն զաւակս, Բարձրեալին մարգարէն պիտի կոչուիս եւ Տիրոջ առջեւէն պիտի քալես, անոր ճամբան պատրաստելու: Ղուկաս 1:76


Անսակարկ սեր եւ ներողամտութիւն

Յիսուս իր առաքելութեան ընթացքին, ժողովուրդին սորվեցնելու համար Աստուծոյ սիրոյ եւ ներողամտութեան մասին յաճախ օգտագործեց ջուրը: Աւետարանի հետեւեալ հատուածները կարդայ եւ տես թէ Յիսուսի ըրածները ինչ ձեւերով ցոյց կուտան իր ըսածները:

Գծիկներով միացուր երեք սիւնակները ճիշդ կերպով:

Յովհաննէս 2 : 1-11	Յիսուս Աստուծոյ ոյժը ցոյց տուաւ հանդարտեցնելով փոթորկոտ լիճը երբ աշակերտները շատ վախցած էին:	Յիսուս կը հրաւիրէ բոլորս բաժնելու ուրիշներու հետ իր սիրոյ եւ ներողամտութեան յուրը:
Մարկոս 4 : 35-41	Յիսուս ըսաւ կնոջ ջրհորին քով «Կենսատու ջուր կրնամ տալ քեզի, որ յաւիտենական կեանք կուտայ»:	Յիսուս կ'ուզէ որ Աստուծոյ սերը ցոյց տանք ուրիշներուն մեր վարքով ու խօսքերով:
Մատթէոս 4 : 18-22	Յիսուս առաջին հրաշքը կատարեց. ջուրը գինիի վերածեց եւ իր փառքը յայտնեց: (Աստուծոյ որդին ըլլալը)	Եթէ Յիսուսի հաւատանք յաւիտենական կեանքի խոստումը կուտայ Ան մեզի:
Յովհաննէս 4 : 5-25	Յիսուս ջուր առնելով իր աշակերտներուն ոտքերը լուաց եւ մեջքէն կապուած դէնջակով սրբեց:	Աստուած մեզ կը սիրէ նոյնիսկ երբ մենք կը վարանինք, կը կասկածինք եւ կը վախնանք:
Յովհաննէս 13 : 5	Յիսուս իր առաջին աշակերտներուն ըսաւ «հետեւեցէք ինծի եւ ես ձեզ մարդու որսորդ պիտի ընեմ»: Անոնք ձգեցին ուռկանները եւ Յիսուսի հետեւեցան:	Յիսուս կը հոգայ մեզ տօնախմբութիւններու ժամանակ, նաեւ մեր կեանքի ամբողջ ընթացքին:

Բացատրություն՝ Հայց. Առաք. Սուրբ Եկեղեցւոյ Պատարագին «շար. 2»

Ս. Պատարագի արարողութեան 4 մասերը:

Ինչպէս անցեալ անգամ նշեցինք, Հայաստանեայց Եկեղեցւոյ Ս. Պատարագի արարողութիւնը 4 մասերէ կը բաղկանայ:

1. Պատրաստութիւն
2. Ճաշու Պաշտօն
3. Բուն Պատարագ
4. Արձակում

Ա. Պատրաստութիւն

Տէրունական Աղօթքին եւ Մաղթանքին կը յաջորդէ Ս. Պատարագին առաջին բաժինը:

1. Պատրաստութիւն պատարագիչ քահանային

Այս բաժինը կը սկսի «Խորհուրդ Խորին» շարականով: Պատարագիչ քահանան կը գտնուի ասանդատուն զգեստաւորուելու: Նախքան զգեստաւորուիլը ան զոջման աղօթք կը կարդայ եւ իր մեղքերուն թողութիւն կը ստանայ այլ եկեղեցականէ մը: Ապա կանոնական աղօթքի ընթերցմամբ, զգեստաւորուելէ ետք, մոմակալներուն եւ բուրվառակիրին առաջնորդութեամբ եկեղեցի կը մտնէ:

Սուրբ Խորանին առջեւ ձեռքերը կը լուայ, հրապարակաւ անգամ մը եւս իր մեղքերը կը խոստովանի Աստուծոյ, Սուրբ Աստուածածնի, բոլոր սուրբերուն եւ ներկայ ժողովուրդին առջեւ, խնդրելով որ աղօթեն իրեն համար եւ խնդրամատոյց ըլլան Աստուծոյ՝ իր մեղքերու թողութեան ի խնդիր: Քահանայէն թողութիւն ստանալէն ետք, մեղք կապանքներէն ձերբազատուած՝ ան խորան կը բարձրանայ, կ'արտասանէ տաճարի աղօթքը, կ'երկրպագէ սուրբ սեղանին եւ ապա վարագոյրը կը գոցուի:

ԲՈՒՐՎԱՌ

Երկուստեղ պարունակ մըն է, որ որպէս կրակարան կը խորհրդանշէ հաւատացեալներու սիրտն ու հոգին: Կրակարանը կապուած է երեք շղթաներով որոնք վերէն իրար միացած են կը խորհրդանշեն Ս. Երրորդութիւնը: Շղթաներուն վրայ կը գտնուին չորսական բռնիքներ, կը խորհրդանշեն տասներկու առաքեալները որոնք իրենց հնչեղութեամբ Քրիստոսի վարդապետութիւնը տարածեցին աշխարհին: Կրակարանին վրայ խունկի աւելցումով արձակուած ծուխը հաւատացեալներու աղօթքները կը խորհրդանշէ, որոնք երկինք կը բարձրանան առ Աստուած: Հին կտակարանի համաձայն հաւատացեալներու աղաչանքն է Աստուծոյ, որ իր աղօթքները ընդունի:

Բուրվառ ԺԸ դար, Վաղարշապատ, Ս. Էջմիածնի գանձատուն



2. Պատրաստութիւն ընծաներուն

Վարագոյրը գոցուելէն ետք, երբ դպիրներ յաւուր պատշաճի մեղեդի կ'երգեն, Աւագ Սարկլաւազը Ս. Սեդան կը բերէ ընծաները՝ ՆՇԽԱՐՆ ու ԳԻՆԻՆ: Պատարագիչ քահանան նախ կը կարդայ Ս. Նարեկացիէն երկու աղօթքներ, ապա ՆՇԽԱՐՆ երկիւղածութեամբ կ'օրհնէ եւ զայն մաղգմային վրայ դնելով կ'ըսէ

«Այս յիշատակ է մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի, որ բազմելով կը հանգչի աննիւթական գահին վրայ, Ան որ յանձն առաւ խաչուիլ մարդկութեան համար, օրհնեցէ՛ք, զովեցէ՛ք եւ փառաւորեցէ՛ք զայն յաւիտեան»:

Ապա գինին կը լեցնէ Սկիհին մէջ, կ'օրհնէ եւ կ'ըսէ

«Փրկագործ տնօրէնութեան յիշատակին համար, մեր Տէր Աստուծոյ եւ մեր փրկչին՝ Յիսուսի Քրիստոսի, որուն կողէն աղբերացող արեամբ նորոգուեցան մարդիկ եւ անմահութիւն զգեցան, օրհնեցէ՛ք, զովեցէ՛ք եւ փառաւորեցէ՛ք զայն յաւիտեան»:

Պատարագիչ քահանան պատրաստելէ ետք ընծաները, կ'օրհնէ, կը խնկարկէ, եւ կը հայցէ Ս. Հոգւոյ ներգործութիւնը: Կ'աղօթէ եւ կը խնդրէ նաեւ Ս. Հոգիէն որ իր շնորհքներով ու պարգէններով զարդարէ բոլոր այն հաւատացեալները, որոնք մասնակից պիտի դառնան Ս. Պատարագին:

Աւագ սարկլաւազը Սկիհը կը տեղաւորէ խորհրդարանին մէջ: Վարագոյրը կը բացուի:

Ի յիշատակ Քրիստոսի մարդեղութեան՝ երկինքէն երկիր խոնարհելուն եւ մարդոց մէջ շրջագայելուն, պատարագիչ քահանան խորանի աջակողմեան աստիճաններէն վար կ'իջնէ բուրվառը ձեռքին, կը խնկարկէ, թափօր կը դառնայ եկեղեցւոյ մէջ, կ'օրհնէ ժողովուրդը եւ ձախակողմեան աստիճաններէն դարձեալ կը բարձրանայ խորան, իր հետ Ս. Սեդան բարձրացնելով հաւատացեալ ժողովուրդին աղօթքն ու աղերսանքը պատարագուող Աստուածորդոյն:

Թափօրի խնկարկութեան ատեն, խաչակնքելով, պատարագիչին ըսել:

- Յիշեսցիր եւ զմեզ առաջի անմահ Գառինն Աստուծոյ:

Պատարագիչը կը պատասխանէ.

- Յիշեալ լիջիք առաջի անմահ Գառինն Աստուծոյ:

ՆՇԽԱՐ

Մասն ու նշխարը եկեղեցւոյ սպասաւորներու կողմէ կը պատրաստուին սպիտակ, մաքուր եւ անխմոր ալիւրով: Նշխարը կ'ըլլայ կլոր ու տափակ որ կը կրէ Յարուցեալ Քրիստոսի պատկերը, մինչ մասը բարակ ու կլորակ է երկաթի վրայ եփուած: Տնօրինէքի եւ այլ առիթներու տրուած նշխարները քահանայէն օրհնուած են: Համաձայն հին բարեպաշտական սովորութեանց, հաւատացեալները նշխար մը կը կրէին իրենց վրայ ապահով ճամբորդութեան համար, հիւանդութեան պարագային եւ մանաւանդ պահպանուելու համար սատանայական որոգայթներէ:



ՄԱՍ

Եկեղեցւոյ մէջ մաս բաժնելը հնաւանդ սովորութիւն է: Մաս կը նշանակէ օրհնուած բարակ բաղարջ հացի կտոր, որ պատարագի աւարտին կը բաժնուի հաւատացեալ ժողովուրդին պահելու համար նախնական եկեղեցւոյ սիրոյ ճաշի յիշատակը: Հաւատացեալներ մասը կը ստանան իրենց աջ ձեռքի երեսին վրայ եւ համբուրելէ ետք բերանին կը դնեն: Մասը խորհրդանշէ է, փշրանք Ս. Սեղանի օրհնութիւններէն, անոր համար մաս բաշխողը կ'ըսէ,

- սա եղիցի քեզ մաս եւ բաժին ի Ս. Պատարագի

իսկ ստացողը կը պատասխանէ

- բաժին իմ եղիցի ի Տէր յաւիտեան:

Անոնք որ հաղորդուած են պատարագի ընթացքին՝ մաս առնելու չեն:

ՄԱՂՁՄԱՅ


Տափակ պնակ որ ՍԿԻՀին հետ միասին կը գործածուի Ս. հաղորդութիւն պատրաստելու համար: Մաղզման կը ծառայէ նուիրական ՆՇԽԱՐը վրան դնելու, թէ՛ նուիրագործութենէ առաջ եւ թէ՛ ետքը: Մեծութիւնը սկիհին համեմատութեամբ է: Մեր եկեղեցւոյ մաղզմաները պէտք է մէջտեղը աւելի խորունկ ըլլան, որպէսզի սրբագործութենէ ետք, սկիհի ծածկոցը վրան դրուած ատեն, անմիջապէս սրբագործեալ մարմինին հետ չշփուի:



ՍԿԻՀ

Նախապէս ընդհանուր անունն էր բաժակի, եւ այժմ կը գործածուի յատկապէս Ս. Պատարագի բաժակը բացատրելու համար: ՍԿԻՀը ընդհանրապէս դուրսէն արծաթեայ է, իսկ ներսէն ոսկեգոծուած: Ձեւաւորումը ու զարդերը կը տարբերին: Հին վանքերու մէջ շատ ընդարձակ ՍԿԻՀներ կան, որուն մէջ կրնայ թաթխուիլ հազարաւոր ուխտաւորներու հաղորդութեան բաւելու չափ մեծ նշխար մը:

Ո՞րն է ճիշդ պատասխանը
Մանկապարտեզի անկիւն



Ամբողջացո՛ւր ըստ Դուկաս 2.8-14 ի.

Հովհաննէս, Խաղաղութի՛ւն, Փրկիչը, Խանձարուրով, հաճութիւն, հրեշտակը,
աւետիս, Օծեալ

Այնտեղ, դաշտերուն մէջ ----- կային, որոնք գիշերով իրենց
հօտերուն պահակութիւն կ'ընէին: Տիրոջ ----- անոնց երեւցաւ եւ
Տիրոջ փառքը լոյսի պէս անոնց վրայ ծագեցաւ: Հովհաննէսը սաստիկ վախցան.
Հրեշտակը ըսաւ անոնց.

- Մի՛ վախնաք, ձեզի ----- մը պիտի տամ, որ ամբողջ ժողովուրդին
մեծ ուրախութիւն պիտի պատճառէ: Այսօր, Դաւիթի քաղաքին մէջ ձեր
----- ծնաւ, որ ----- Տէրն է: Հետեւեալը ապացոյց ըլլայ ձեզի. հոն
մանուկ մը պիտի գտնէք՝ ----- փաթթուած եւ մսուրի մէջ դրուած:

Եւ յանկարծ այդ հրեշտակին միացաւ երկնաւոր զօրքերու բազմութիւն
մը, որ կ'օրհնաբանէր զԱստուած, ըսելով.

«Բարձունքներուն մէջ Աստուծոյ փա՛ռք, ----- երկրի վրայ
եւ մարդոց միջեւ -----»:

Ո՞րն է ճիշդ պատասխանը

Նախակրթարան Ա., Բ. եւ Գ. դասարաններու անկիւն

1.- Որո՞ւ տօնը այս տարի կը տօնենք
Դեկտեմբեր 13-ին:

- ա. Ս. Յովհաննէս Ոսկեբերան
- Հայրապետին
- բ. Մարուգէ ճգնաւորին
- գ. Ս. Անդրէաս եւ Ս. Փիլիպպոս
- դ. Սուրբ Յակոբ Մծբնայ
- հայրապետին

2.- Այս տարի ե՞րբ կը տօնենք Ս.
Ստեփանոսի տօնը:

- ա. Նոյեմբեր 3
- բ. Դեկտեմբեր 1
- գ. Նոյեմբեր 23
- դ. Դեկտեմբեր 25

3.- Այս տարի ե՞րբ կը տօնենք
Սուրբ Պօղոս եւ Սուրբ Պետրոս
Առաքեալներու տօնը:

- ա. Նոյեմբեր 6
- բ. Դեկտեմբեր 26
- գ. Նոյեմբեր 20
- դ. Դեկտեմբեր 27

4.- Ո՞վ էր առաջին քրիստոնէայ
թագաւորը:

- ա. Աբգար Ա.
- բ. Տրդատ Գ.
- գ. Տրդատ Ա.
- դ. Տրդատ Բ.

5.- Ի՞նչ է Մկրտութեան զգալի նշանը:

- ա. Հաց
- բ. Գինի
- գ. Ջուր
- դ. Միւռոն

6.- Որո՞նք են Հայաստանի առաջին
լուսաւորիչները:

- ա. Ս. Թադէոս եւ Ս. Բարթողիմէոս
- բ. Սուրբ Պօղոս եւ Սուրբ Պետրոս
- գ. Աբգար Ա. եւ Տրդատ Գ.
- դ. Ս. Գրիգոր Լուսաւորիչ

7.- Յիսուս որո՞ւ կողմէ մկրտուեցաւ:

Յ----- Մ-----

8.- Յիսուս քանի՞ անգամ
մկրտուեցաւ:

- ա. 1
- բ. 2
- գ. 3
- դ. 4

9. Մենք քանի՞ անգամ կրնանք
մկրտուիլ:

- ա. 1
- բ. 2
- գ. 3
- դ. 4

10. Ի՞նչ էր Յովհաննէս Մկրտիչին
հօրը անունը:

Զ-----

Ո՞րն է ճիշդ պատասխանը
Նախակրթարան Դ., Ե. եւ Զ. դասարաններու անկիւն

1.- Որո՞ւ տօնը այս տարի տօնեցինք
Նոյեմբեր 29-ին (2 պատասխան):

- ա. Ս. Թադէոս Առաքեալին
- բ. Մարուգէ ճգնաւորին
- գ. Ս. Բարթողիմէոս Առաքեալին
- դ. Սուրբ Յակոբ Մծբնայ
հայրապետին

2.- Սուրբ Յակոբ Մծբնայ Հայրապետի
տօնը կը տօնենք ամէն տարի:

- ա. Դեկտեմբեր 13-ին
- բ. Դեկտեմբեր 14-ին
- գ. Դեկտեմբեր 18-ին
- դ. Դեկտեմբեր 12-18 օրերուն մէջ
հանդիպող Շաբաթ օրը

3.- Ո՞վ է առաջին մարտիրոսը:

- ա. Ս. Պօղոս
- բ. Ս. Պետրոս
- գ. Ս. Ստեփանոս
- դ. Ս. Դաւիթ մարգարէ

4.- Ո՞վ էր նախասարկաւագր:

- ա. Ս. Պօղոս
- բ. Ս. Պետրոս
- գ. Ս. Ստեփանոս
- դ. Ս. Դաւիթ մարգարէ

5.- Ո՞ր առաքեալը Յիսուսը 3 անգամ
ուրացաւ եւ որուն տօնը այս տարի
Դեկտեմբեր 26-ին կը յիշատակենք:

Ս. Պ-----

6.- Ո՞վ էր Իսրայէլի երկրորդ
թագաւորը:

- ա. Սաւուղ
- բ. Դաւիթ
- գ. Սողոմոն
- դ. Սամուէլ

7.- Ո՞վ «Բարձրեալին մարգարէն
պիտի կոչուի եւ Տիրոջ առջեւէն
պիտի քալէ անոր ճամբան
պատրաստելու համար»:

Յ----- Մ-----

8.- Մկրտութեան թեկնածուն ի՞նչ կը
կոչուի:

- ա. Երախայ
- բ. Երեխայ
- գ. Մանուկ
- դ. Պգոտիկ

9. Մկրտութիւնը կը կոչուի նաեւ.

Վ----- Ծ-----:

10. Հին Կտակարանի Սաղմոսներու
գիրքը քանի՞ սաղմոսներէ կը
բաղկանայ:

- ա. 150
- բ. 66
- գ. 76
- դ. 39

Ո՞րն է ճիշդ պատասխանը
Երկրորդականի անկիւն

1.- Ըսէ՛ մէկ բառով:

«աղ մատուցել»

2.- Սաղմոսավանք Հայաստանի ո՞ր
մարզին մէջ կը գտնուի:

ա. Արագածոտն

բ. Տաւուշ

գ. Սիւնիք

դ. Վայոց Ձոր:

3.- Ի՞նչ էր Պօղոս Առաքեալին
անունը երբ կը հալածէր Քրիստոսի
հետեւորդները:

Ս-----

4.- Ե՞րբ հիմնուեցաւ Սուրբ Յակոբ
Կիրակնօրեայ Դպրոցը:

19--

5.- Ս. Յակոբ Մծբնայ հայրապետը
ո՞ր Տիեզերական ժողովին
մասնակցեցաւ, ո՞ր տարին:

ա. Ն-----

բ. 3--

6.- Պօղոս Առաքեալ ի՞նչ գործով կը
գրադէր:

ա. Ձկնորս

բ. Մաքսաւոր

գ. Վրանագործ

դ. Հողագործ

7.- Ս. Պօղոս Առաքեալի գրած
գիրքերուն թիւը երբ բաժնենք Ս.

Պետրոս առաքեալի գրած գիրքերուն
թիւով, քանի՞ կ'ունենանք:

ա. 2

բ. 3

գ. 5

դ. 7

8.- Ըստ Ս. Ներսէս Շնորհալիի, ո՞վ
«Յաղթող եւ Սուրբ Հայրապետ»ը:

Սուրբ -----

9. Ո՞ր քաղաքը «Դաւիթի քաղաք» կը
կոչուի:


10. Ինչո՞ւ Բարթուղիմէոս առաքեալ
դաշոյնով կ'երեւի նկարներուն մէջ:

Որովհետեւ դաշոյնով

ն----- է:

Տօնաձառի Չարդ

1. Տպե՛լ այս էջը
2. Գունաւորե՛լ ապա կտրե՛
3. Օրինակին հետեւելով՝ փակցո՛ւր



Լուրեր Կիրակնօրեային

Նոյեմբերի ընթացքին, աշակերտները դասարանային պահերը շարունակեցին ըստ դասագրքերու, իսկ լսարանային պահերուն՝ 2-ին, և անոնք անդրադարձան Ամենայն Սրբոց տօնին, եւ նաեւ ստացան «Մաշտոցի Արձագանգ»-ի Նոյեմբեր 2025-ի թիւը: 9-ին, անդրադարձան Ս. Գաբրիէլ եւ Ս. Միքայէլ Հրեշտակապետերու տօնին, նաեւ ձեռնային աշխատանքով: Երա ժշտութեան պահ ալ ունեցան: 16-ին անդրադարձան Յիսուսի առաքեալներէն Ս. Անդրէասի եւ Ս. Փիլիպպոսի ինչպէս նաեւ Յիսնակի Պափքի Բարեկենդանին: 23-ին եւ 30-ին անդրադարձան Ս. Գրիգոր Մքանչելագործին, եւ Ս. Նիկողայոսին (որ նախատիպարն է Santa Claus-ին) եւ երաժշտութեան դասապահին Սուրբ Ծննդեան երգեր սորվեցան:



Վիրակնորեան պիտի ունենայ Ս. Ծննդեան իր յայտագիրը

էւ



Վիրակնորեայ Դպրոց
պիտի այցելէ

Դեկտեմբեր 21, 2025-ին

<https://www.sourphagop.org/>

<https://www.facebook.com/sourphagop.org>

https://www.instagram.com/sh_sundayschool/